ԵՐՎԱՆԴ ՕՏՅԱՆԻ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԼԵԶՈՒՆ

ՆԵԼԼԻ ՏԻՏԱՆՅԱՆ

Հայ մեծ երգիծաբան Ե. Օտյանը, լինելով արևմտահայ խոշոր վիպասաններից մեկը, միաժամանակ հայտնի է որպես վիպակների և պատմվածքների հեղինակ։ Նա իր նոր և ուրույն խոսքն ասաց երգիծական պատմվածքի ասպարեզում և դարձավ Հ. Պարոնյանի գործի արժանի շարունակողը՝ բարձր դիրքերում պահելով հայ երգիծաբանությունը։ Անկասկած, Հ. Պարոնյանի ստեղծագործությունը մեծ ազդեցություն է թողել Ե. Օտյանի երգիծաբանության վրա։ Սակայն վերջինիս մեծությունը կայանում է նրանում, որ նա չկրկնեց Հ. Պարոնյանին, այլ իր նոր խոսքն ասաց հայ երգիծաբանության բնագավառում՝ հարստացնելով այն իր բարձրարվեստ վեպերով, վիպակներով, պատմվածքներով, և խոր հետք թողեց հայ գրականության մեջ։ Սա հատկապես վերաբերում է հեղինակի քաղաքական երգիծանքին, ուր նա մնաց չգերազանցված։

Ե. Օտյանը սկսեց ստեղծագործել մի այնպիսի ժամանակաշրջանում, որը չափազանց հարուստ էր քաղաքական իրադարձություններով։ Մի կողմից սուլթանական Թուրքիան իր ներքին հակասություններով և հայահալած ցարդարար քաղաքականությամբ, մյուս կողմից՝ հայկական քաղաքական կուսակցությունների անհեռատես գործունեությունը, զարգացող հայ բուրժուազիան իր թերություններով և, վերջապես, առաջին համաշխարհային պատերազմն իր արհավիրքներով, հայկական հարցը և մեծ տերությունների բռնած դիրքը այդ հարցի վերաբերյալ։ Ահա հիմնականում այն պատմա-քաղաքական իրադարձությունները, որոնք անսպառ նյութ են հանդիսացել ստեղծագործողի համար։

Ա. Շիրվանզադեն իր «Երվանդ Օտյան» հուշագրության մեջ հետևյալն է գրում. «Իմ կարծիքով որպես երգիծաբան Երվանդ Օտյանը ավելի ինքնատիպ է, քան Հակոբ Պարոնյանը, թեև ոչ այս չափ սրամիտ և հնարագետ։ Հարկավ նա էլ է ենթարկվել Մոլիերի ազդեցությանը, բայց ոչ անհաշիվ ու անվերապահ... Երվանդ Օտյանն ունի մի մեծ արժանավորություն՝ ոճի զարմանալի պարզություն»[1]։ Իսկ Ա. Տերտերյանը գտնում է, որ Ե. Օտյանի վրա ամենից շատ ազդեցություն է թողել Հ. Պարոնյանը. «Օտյանն աշակերտել է Պարոնյանին, նրանից սովորել է, անցել է ուսումնառության որոշ շրջան. բայց այնուհետև ինքնուրույնացել է, սկսել է սովորածը յուրահատուկ դրոշմով ցուցադրել և սեփական երգիծական արժեքներ ստեղծել»[2]։

Այդպիսի երգիծական արժեքներից են հեղինակի պատմվածքները, որոնցում շողշողաց դրոդ-երգիծաբանի փայլուն տաղանդը ծիածանի բոլոր

---

[1] Ա. Շիրվանզադե, Երվանդ Օտյան («Սովետական գրականություն», 1941, № 1, էջ 27)։

[2] Ա. Տերտերյան, Հայ կլասիկներ, Ա, Երևան, 1945, էջ 744։

դույներով։ Վրթանես Փափազյանը գրում է. «Իրապես լուրջ երգիծաբան է Երվանդ Օտյան, որ առօրյա ընթացիկ հարցերու մասին կգրե սրամիտ փոքրիկ էջեր»[3]։

Եվ իրոք, ոչ մի բան չի վրիպում սրամիտ գրողի աչքից, այն ամենը, ինչ կատարվում է հեղինակի շուրջը, արձագանք է գտնում նրա պատմվածքներում, և կյանքում գիտված բացասական երևույթները հեղինակի գրչի տակ ընդունում են ծիծաղելի բնույթ։ Ե. Օտյանը հեգնում է ուժգին և անխնա, ծաղրում է բացասականը և այդպիսով դարձնում այն տեսանելի՝ զերծ բոլոր քողերից։

Ա. Շիրվանզադեն լակոնիկ և վերին աստիճանի դիպուկ է բնորոշել գրողերգիծաբանի էությունը. «Նրա հումորն անսպառ էր, ձայնը միշտ անփոփոխ, ծիծաղը միշտ անձայն»[4]։

Գրողի երգիծանքի առանձնահատկություններից են սրամտությունները, որոնցով լեցուն են նրա շատ երկեր։ Նա երբեք չի թաքցրել իր ծիծաղը, իր հեգնական վերաբերմունքն այն երևույթների և անձանց նկատմամբ, որոնց ժխտում, քննադատում է սրամտությունների միջոցով։ Ըստ որում, այդ ժխտական և ծաղրական վերաբերմունքը հեղինակը մատնացույց է անում այս կամ այն ստեղծագործության առաջին իսկ տողերից. նախաբանից սկսած՝ արդեն հայտնի է դառնում հեղինակի մտադրությունը՝ ծաղրել, հեգնել այն վնասակար երևույթը, որ իր մեջ մեծ վտանգ է պարունակում։ Այդ սկզբունքի վառ օրինակներից են Ե. Օտյանի «Հեղափոխության մակաբույծները» պատմվածաշարի բոլոր պատմվածքները։

Ե. Օտյանի երգիծական պատմվածքների այս շարքն ունի վերին աստիճանի պարզ և հստակ կառուցվածք և բավական տարբերվում է նրա մյուս պատմվածքներից։ Դրանք կառուցված են այնպես, որ երկի գործողությունների ողջ ընթացքում առաջնակարգ տեղում են հեղինակին հուզող հարցերը, ինչպես նաև հերոսները, որոնք և դառնում են պատմվածքների կոմպոզիցիոն կենտրոնը։ Երգիծական պատմվածքներում իրադարձությունների շարադրման ձևը բազմազան է։ Այստեղ կարելի է հանդիպել դեպքերը ականատեսի աչքերով տեսածի շարադրանքի, ինչպիսիք են՝ «Արտասահմանի գործիչը», «Խմբագիրը», «Որ մենք հերոս...», «Նախկին գործիչը», «Համբարձում աղա», այնպիսի պատմվածքների, ուր շարադրանքը տրված է հեղինակի կողմից, օրինակ, «Կեղծ լրտեսը», «Անվավեր հերոսները»։ Ինչպես նաև՝ երբ միևնույն պատմվածքում դեպքերը շարադրվում են և՛ ականատեսի, և՛ հեղինակի կողմից («Հակահեղափոխականը»)։

Ե. Օտյանը իր երգիծական կերպարներն ստեղծելիս դիմել է մի շարք կոմպոզիցիոն միջոցների։ Կերպարի հաջողվածությանը մեծ չափով նպաստել է հերոսների արտաքին նկարագրությունը, քանի որ արտաքինը պայմանավորված է կերպարի ներքին էությամբ։ Արտաքին նկարագրությունը արտահայտում է նաև հեղինակի բացասական վերաբերմունքը դեպի երգիծական հերոսը։ Ըստ որում, հենց արտաքին նկարագրությունն է այն կարևոր հանգամանքը, որի միջոցով նրան հաջողվում է ստեղծել ժխտական,

---

3 Վրթ. Փափազյան, Պատմություն հայ գրականության, երկրորդ գիրք, Կ. Պոլիս, 1914, էջ 119։

4 Ա. Շիրվանզադե, նշվ. աշխ., էջ 33։

արհամարհական և հեգնական տրամադրություն։ Ե. Օտյանի հերոսների արտաքին նկարագրությունները աչքի են ընկնում իրենց սրամտությամբ, արտահայտչականությամբ, դիպուկությամբ։ Օրինակ՝ «Խմբագիրը» պատմվածքի գլխավոր հերոս Զաքեոսի արտաքին նկարագրությունը միանգամայն համընկնում է նրա ներքին էությանը և միաժամանակ մատնացույց է անում հեղինակի ծաղրական վերաբերմունքը դեպի իր խղճուկ հերոսը. «Կարճուկ, շա՜տ կարճուկ մարդ էր։ Քառակուսի։ Կատարելապես քառակուսի դեմքով մը, որուն ճակատը թուշին կմիանա ուղիղ, բացարձակապես ուղիղ գծով մը։ Քիչ մը պեխ, աղտոտ հագուստներ, պզտիկ շուն մը ետևեն, ու ահա նույն ինքն է պարոն Զաքեոս»[5]։

Ե. Օտյանի կիրառած կոմպոզիցիոն կարևոր միջոցներից է նաև հերոսների ուղղակի խոսքը, որը վեր է ածվում խոսքի կոմիզմի և գրողի գրչի տակ կրում ինքնամերկացման բնույթ։ Այս առումով ուշագրավ է Զաքեոսի ուղղակի խոսքը. «Ուշ հասա, ուշ։ Եթե վեց-յոթ տարի առաջ գործը սկսեի՝ հիմա դիրքս շինած էի։ Ես ալ եղած էի խազարեկ մը...»[6]։

Երգիծաբանը իր պատմվածքներում հաճախ է դիմել կերպարների բնութագրման ևս մեկ կոմպոզիցիոն միջոցի։ Դա երկի գլխավոր հերոսի մասին մյուս գործող անձանց արտահայտած կարծիքն է կամ տված բնութագիրը։ Օրինակ՝ «Արտասահմանի գործիչը» պատմվածքի գլխավոր հերոս Կակայանցի վերաբերյալ արտահայտված կարծիքները բավական պատկերացում են տալիս այդ կեղծ գործչի անձի մասին։ Այն հարցին, թե ինչով է զբաղվում Կակայանցը, լսվում է մի հեգնական և սպառիչ պատասխան. «Բան մը չըներ. հեղափոխական է», մեկ ուրիշը ասում է. «Ձգեցեք սա պարապ մարդը...», մյուսը՝ «Շատախոսին մեկն է»[7] և այլն։

Ե. Օտյանը հաճախ հերոսների բնութագրությունները տալիս է այնպես, որ հայտնի են դառնում նրանց ընդունակությունները, հակումները, ձգտումները, նրանց ով լինելը։ Օրինակ՝ «Հակահեղափոխականը» պատմվածքում տրված բնութագրությունից հասկանալի է դառնում երկի հերոս պ. Միսաքի մշակած և կյանքում կիրառած կենցաղային փիլիսոփայությունը. «Իր միակ անձնական սկզբունքը կրնանք բանաձևել սա կերպով. «Ամեն բանի ժամանակ կա, հեղափոխական ըլլալու ժամանակ և հակահեղափոխական ըլլալու ժամանակ. սողալու ժամանակ և խայթելու ժամանակ. ճառ խոսելու ժամանակ և հանգանակություն ընելու ժամանակ. Մանչեստեր երթալու ժամանակ և Մանչեստերեն ետ դառնալու ժամանակ. նախատինքներ ընդունելու ժամանակ և նախատինքները մարսելու ժամանակ. ստակ մուրալու ժամանակ և ստակը պանքան դնելու ժամանակ. նավթի վաճառականները խնկարկելու ժամանակ և մանիֆաթուրայի վաճառականները փառաբանելու ժամանակ»[8]։

Սպառիչ է «Համբարձում աղա» պատմվածքի հերոսի բնութագրությունը. «Անձնական արժանք մը, կարողություն մը՝ բնական կամ ստացական, չուներ. ընդհակառակը իրողություններն իրեն դեմ էին։ Ձախող և անխորհուրդ գոր-

---

5 Երվանդ Օտյան, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1960, էջ 391։
6 Նույն տեղում, էջ 394։
7 Նույն տեղում, էջ 385։
8 Նույն տեղում, էջ 427։

ծելով փչացուցած էր հորենական հարստությունը և հիմակ անոր թափթփուկներով կապրեր։ Գալով իր մտային պաշարին՝ շատ խեղճ, շատ ողորմելի բան էր. հազիվ հասարակ ընթերցանություն մը գիտեր և կյանքին մեջ Նարեկ կամ Սաղմոսեն ետքը «Մասիս» լրագիրը միայն կարդացած էր ու կկարդար։ Այն բնական ուշիմարությունն ու աչքաբացությունն ալ չուներ, որով շատ անգամ տգետ մարդ մը սուր դիտող ու ողջախոհ միտք մը կունենա։ Բթամիտ մըն էր բառիս բուն իմաստով»[9]։

Ե. Օտյանը օգտագործում է կոմպոզիցիոն ուրիշ միջոցներ էլ, որոնցից մեկը հերոսին շրջապատող առարկաների նկարագրությունն է։ «Համբարձում աղա» պատմվածքում ժամացույցի նկարագրության մեջ կարելի է տեսնել այն քողարկվածությունն ու խորհրդավորությունը, որոնցով պատված էր ինքը՝ Համբարձում աղան։ Նրա ժամացույցը հազվադեպ կարելի էր տեսնել, քանի որ այն միշտ «պահված էր չուխայի պզտիկ պարկի մը մեջ, որպեսզի ոսկին չկորսնցուներ իր փայլը և ամեն մեկանց ամփոփված ընկույզի փայտե տուփիկի մը մեջ, որպեսզի ոևէ դիպվածական արկածե զերծ մնա»[10]։

Իր պատմվածքների կերպարների ստեղծման ժամանակ Ե. Օտյանը դիմում է նաև նրանց հոգեվիճակի, դատողությունների, ապրումների նկարագրությանը, որը նպաստում է հերոսների ներքին էության լուսաբանմանը։ Այդպես է վարվել, օրինակ, «Ոսկեմոլը» պատմվածքի գլխավոր հերոս Դանիել վարդապետի կերպարը կերտելիս. «Ոսկին, իր դեղին ու փայլուն տեսքով մոգական, անդիմադրելի կախարդանք մը կգործեր իր վրա. հաճախ՝ փայլուն ոսկիի մը դիմաց, երկար ատեն հմայված, մագնիսացած կմնար, ինչպես թռչուն մը քոպրայի մը աչքերուն դեմ»[11]։

Բացի վերը նշված կոմպոզիցիոն միջոցներից, որոնք նպաստում են կերպարի ավելի խոր բացահայտմանը, նրա էության ճիշտ ընկալմանը, հասկանալի է, որ ամենամեծ դերը պատկանում է երկի սյուժեին, ուր հերոսը հանդես է գալիս գործողության մեջ, երկի մյուս հերոսների հետ բախվելիս։ Այսինքն՝ սյուժեի մեջ հերոսները դառնում են է՛լ ավելի շոշափելի, իսկ նրանց էությունը՝ ավելի հասկանալի, քանի որ այստեղ նրանք հանդես են գալիս իրենց միջավայրում, մյուս հերոսների ֆոնի վրա, նրանց հետ շփվելիս։

Ե. Օտյանի երգիծական պատմվածքները ուշագրավ են և նրանով, որ չունենալով դեպքերով և գործողություններով այնքան էլ հարուստ սյուժե, արտահայտում են հարուստ և տվյալ ժամանակաշրջանի համար խիստ կարևոր բովանդակություն։ Այդպիսին է «Հեղափոխության մակաբույծները» պատմվածաշարի յուրաքանչյուր պատմվածք առանձին վերցրած։ Նշենք և այն հանգամանքը, որ Ե. Օտյանը, հաճախ, գլխավոր սյուժեի հետ զուգահեռաբար պատկերում է նաև երկրորդական սյուժե, որը նպաստում է երկի բովանդակությանը, ինչպես նաև գլխավոր հերոսի կերպարի ավելի խոր, բազմակողմանի և համոզիչ պատկերմանը։ Նմանօրինակ երկրորդական սյուժեների կարելի է հանդիպել «Խմբագիրը» պատմվածքում, ուր գլխավոր հերոս Զաքեոսի գործունեությունը համեմատվում է ոմն Խազաբեկյանի գործունեության հետ։ Վերջինս ուժեղ անձնավորություն է, և իր խմբագրական գործու-

9 Նույն տեղում, էջ 502—503։
10 Նույն տեղում, էջ 500։
11 Նույն տեղում, էջ 521։

նեության մեջ հասել է մեծ հաջողությունների՝ կարողացել է շատ հարստանալ։ Համեմատելով այդ հսկայի հետ, Զաքեոսը դառնում է է՛լ ավելի խղճուկ և ծիծաղելի։ «Անվավեր հերոսներ» պատմվածքում մահացած հերոս Միքոյի անվան տակ հանդես եկող բախտախնդիրը հակադրված է Միսաք Անկախյանին, որը միամտորեն հավատում էր այդ մակաբույծներին և օգնում նրանց տարիներ շարունակ։

«Ոսկեմոլ» պատմվածքում երկի գլխավոր սյուժեի հետ հեղինակը տվել է նաև երկրորդական մի փոքր սյուժետային գիծ։ Այստեղ գլխավոր սյուժեն վաշխառու Դանիելի կյանքն է, որը անց է կացել միայն ոսկի դիզելով, կողոպտելով և անմեղներին դժբախտացնելով։ Ահա մի այդպիսի անմեղ զոհի պատմություն է տալիս Ե. Օտյանը, որը կազմում է երկի երկրորդական սյուժետային գիծը և այն լրացնում է հիմնական սյուժեն։ Այսպիսով, Ե. Օտյանի պատմվածքների սյուժեների կոնֆլիկտները կրում են սուր, լարված բնույթ և առաջին հայացքից թվում է, թե հեղինակի որոշ երգիծական պատմվածքների հակադրություններն են։ Օրինակ՝ «Ոսկեմոլը» պատմվածքի սյուժեում եղած հակադրությունը դուրս է գալիս անձնականի շրջանակներից և ստանում հասարակական նշանակություն ունեցող հակադրություն։ Իսկ «Հեղափոխության մակաբույծները» պատմվածաշարի յուրաքանչյուր պատմվածքի սյուժեի հիմքում ընկած հակադրությունը հենց սկզբից էլ կենսական նշանակություն ունեցող հակադրություն է։

Ե. Օտյանը իր պատմվածքներում լեզվի պատկերավորության միջոցները կիրառել է վերին աստիճանի նրբությամբ, ճաշակով, առանց շռայլման. տեղին և դիպուկ։ Այդպիսիք են նրա կատարած համեմատությունները, որոնք լակոնիկ են, սրամիտ, չափազանց արտահայտիչ։ Օրինակ՝ «Խմբագիրը» պատմվածքում նա գրում է. «Լռությունը՝ որ տևեց մեր մեջ՝ պաղ էր. ինչպես հովի, որ կփչեր դեկտեմբերին, Աթենքի մեջ, Հիմեդ լեռան կողմեն»[12]։ Նմանօրինակ սրամիտ համեմատության ենք հանդիպում նաև «Որ մենք հերոս...» պատմվածքի հերոս Վարդհոդյանի նկարագրության մեջ. «Խեղճ Վարդհոդյան, ինքն ալ Արտաշեսի պես կրնար զոչել՝ «Ավա՜ղ, փառացս անցավորի»[13]։

Ե. Օտյանի համեմատություններն աչքի են ընկնում իրենց յուրահատկությամբ և ինքնատիպությամբ։ «Անվավեր հերոսներ» պատմվածքում ցանկանալով ծաղրել իր հերոսների դատարկամտությունը, ինչպես նաև նրանց խոսքերի անիմաստությունը, հեղինակը դիմում է այնպիսի մի համեմատության, որը աչքի է ընկնում իր գեղեցկությամբ. «...Միսաք Անկախյան երկուհրեք տարիե ի վեր մտիկ կըներ բոլոր այդ խոսքերը, որոնք իրարու կնմանեին՝ այծյամի մը երկվորյակ ուլերուն պես»[14]։ Կատարվող համեմատություններն ուշագրավ են իրենց անկրկնելիությամբ։ Այս առումով ամենահաջողվածը, թերևս, «Հակահեղափոխականը» պատմվածքի հերոս պ. Սիսակի էության, բնավորության քննադատման ժամանակ կատարված համեմատությունն է. «Բայի պես կեղանակավորի ժամանակներու համեմատ, գոյականի մը պես կը հոլովվի, տեր-բային հետ համաձայն է՝ երբ տեր-բային վաճա-

12 Նույն տեղում, էջ 392։
13 Նույն տեղում, էջ 405։
14 Նույն տեղում, էջ 420։

ական մըն է, միշտ ներկա ընդունելության է, երբ դրամ տալու երթան իրեն և բացասական մասնիկ՝ երբ դրամ խնդրեն իրմե։ Ասկե զատ, հայելիե մարդ մըն է, որ կը ցոլացնե միայն իր վաճառականներուն գաղափարներն ու հուզումները,— հարուստ վաճառականի մը սալոնին հղկուն, մաքուր, անարատ հայելին, որուն վրա. փոշի մը չես կրնար գտնել, որ բիծ մը չունի»[15]։

Շնորհիվ ժողովրդական ասացվածքների, ա ասկների և այլն Ե. Օտյանի երգիծանքը դարձել է գունեղ, պատկերավոր և դիպուկ։ Ա. Տերտերյանի բառերով ասած՝ այդ «հայ բառ ու բանի շտեմարանը» Ե. Օտյանը օգտագործել է խնամքով և տեղին։ Այդպիսի օրինակի կարելի է հանդիպել «Խմբագիրը» պատմվածքում, երբ հեղինակը նկարագրում է իր հերոսին՝ հինգ ֆրանկ, կես դոլար ստանալուց հետո. «Ու Զաքեոս՝ հուսահատ՝ «ապերա՞խտ ազգ» գոչելով թթխատունեն կմեկներ գանձած քիչ մը դրամովը ու շունչը կառներ գինետուն, ըստ խրատու առակողին, թե «օղին կորսվելու վրա եղողին ու գինին գառնահոգիներուն տվեք, որ անոնք խմեն ու իրենց աղքատությունը մոռանան և իրենց նեղությունը մեյ մըն ալ չհիշեն»[16]։

Ե. Օտյանի երգիծանքի առանձնահատկություններից են նրա ստեղծագործություններում հանդիպող հերոսների խոսուն անունները, որոնք չափազանց սրամիտ են և ծիծաղելի (Վարդհոգյան, Դաշույն Արտունի, Անկախյան)։ Գրողի երգիծանքին բնորոշ են նաև թևավոր խոսքերը, որոնք նա օգտագործում է տեղին, բայց ոչ շռայլ։ Այդ մասին Ա. Տերտերյանը գրել է. «Օտյանը երգիծական ոճի վարպետ է։ Նրա խոսքը պատկերավոր է, հակիրճ և հատու։ Ունի տպավորիչ արտահայտություններ, որոնք հիշողության մեջ անմոռաց են մնում իբրև «թևավոր խոսքեր»[17]։ Ահա մի քանիսը այդ թևավոր արտահայտություններից. «մուրացկանության հերոս», «ոմբային հնչունություն», «կեղծ լրտեսություն», «առավ-փախավին մեկն է», «դժոխքեն ինկած Սադայել մըն էր կարծես», «հեղափոխության մակաբույծներ» և այլն։

Պատմվածքներում հանդիպող մյուս լեզվական միջոցը մակդիրն է։ Ե. Օտյանը մակդիրը օգտագործել է իր հերոսներին բնութագրելու, ինչպես նաև նրանց արտաքինը նկարագրելու ժամանակ։ Մակդիրները ևս աչքի են ընկնում իրենց արտահայտչականությամբ և սրամտությամբ։ «Խմբագիրը» պատմվածքում պատկերելով Զաքեոսի հոգեվիճակը, հեղինակը մի քանի մակդիրների միջոցով կարողացել է ստեղծել Զաքեոսի ավարտված կերպարը, ինչպես նաև՝ արտահայտել իր վերաբերմունքը նրա նկատմամբ։ Դրանք են. «փառատենչ» (անուրջներ), «երկչոտ» (մարդ) «մեծկակ» (մակաբույծ մը)։ «Ոսկեմոլը» պատմվածքի հերոս Դանիել վարդապետին Ե. Օտյանը բնութագրում է հետևյալ բովանդակալից մակդիրներով. «անմատչելի», «սակավախոս» (վարդապետ), «խորհրդավոր» (հանելուկ մը), «մոգական», «անդիմադրելի» (կախարդանք մը), «մոլեգին» (պաշտամունք), «անզգա ու անդրդվելի» (համառություն), «բարկաճայթ» (ձայն), «հանդարտ» (անխղճություն), «տարտամ ու անորոշ» (խղճի խայթ), «խստաբեր» (կյանք)։

Գունեղ են այն մակդիրները, որոնց օգնությամբ, մասնավորապես «Համբարձում աղա» պատմվածքում, բացահայտվում են գլխավոր հերոսի էու-

15 Նույն տեղում, էջ 427։
16 Նույն տեղում, էջ 593։
17 Ա. Տերտերյան, նշվ. աշխ., էջ 727։

թյունը, վարքագիծը. «ցուրտ» (վարմունք մը), «լուրջ ճնշող, հուղարկավորական, սառեցուցիչ» (շեշտով մը), «ողորմելի» (խորհուրդ մը), «թավագլուխ» (անկում)։ Պատկերավոր տպավորիչ և սրամիտ մակդիրներով են աչքի ընկնում Ե. Օտյանի երգիծական հերոսների արտաքին նկարագրությունները։ «Ոսկեմոլը» պատմվածքում ցանկանալով ընդգծել Դանիել վարդապետի իրոք դիվային լինելը, հեղինակը նրան բնութագրել է այնպիսի մակդիրներով, որոնք համապատասխանում են այդ հերոսի էությանը. «անսովոր և շարաշուք» (փայլ), «դիվային» (նայվածք), «դիվային» (հրճվանք), «տենդահար» (ձեռքեր) և այլն։ «Արտասահմանի գործիչը» պատմվածքի հերոս Կակայանցի արտաքինը նկարագրելիս Ե. Օտյանն օգտագործել է մի շարք հեգնական մակդիրներ, որոնք ավելի են ընդգծում հեղինակի ծաղրական վերաբերմունքը այդ կեղծ հերոսի նկատմամբ. «ջրվեժացյալ» (մորուք), «գիսախռիվ» (մազեր), «երազուն» (նայվածք)։

Ե. Օտյանի պատմվածքներին չափազանց բնորոշ է հեգնանքը։ «Հեղափոխության մակաբույծները» պատմվածաշարում հեգնանքը կրում է այնպիսի դայրալից, ոչնչացնող և թունոտ բնույթ, որ վեր է ածվում սարկազմի։ Նույնն է նաև «Հակահեղափոխականը» պատմվածքում, երբ հեղինակը վրդովված և ատելությամբ պատկերում է պատմվածքի հերոս պ. Միսաքի, քամելեոնության և քծնանքի մեջ վարպետացած այդ անձնավորության ապագա վարքագիծը. «Բայց չհուսահատինք իրմե. այն օրն, ուր նավթն ու մանիֆաթուրան հաշտվին հեղափոխության հետ, պ. Միսաք մեջտեղ պիտի ելլե կարմիր վզնոցով մը, ձեռքը բռնած գրիչ ու սուր ու «Ձայնը հնչեց» պիտի երգե»[18]։ «Խմբագիրը» պատմվածքում հեգնելով իր հերոսին, ծիծաղելով նրա վրա սարկաստիկ ծիծաղով, հեղինակն ասում է, որ իր հերոսը ձգտում է «մեծկակ մակաբույծ մը ըլլալ». այստեղ «մեծկակ» բառը ստանում է սարկաստիկ բնույթ։

Երգիծաբանը իր պատմվածքներում կիրառել է գրոտեսկ, որը հեղինակին հնարավորություն է տվել (օրինակ՝ «Ոսկեմոլը» պատմվածքում) իր դիվային հերոսի կյանքի վերջին բոպեների վարքագծին ֆանտաստիկ բնույթ տալու, ավելի պատկերավոր բացահայտելու վաշխառու Դանիելի գիշատիչ ոսկեմոլությունը։ Մահից առաջ անգամ նա չի մոռանում ոսկիների մասին և գերմարդկային ուժ գործադրելով, ստիպում է ինքն իրեն վեր կենալ անկողնուց, բերել դրանք. «Երբ քսակը բացավ և քսաննոց ոսկիները պարպեց վերմակին վրա, աչքերը դիվային հրճվանքով մը փայլեցան»[19]։ Սակայն, երբ սկսում են խցիկի դուռը թակել, Դանիել վարդապետը իրեն չի կորցնում, ոսկիները գցելով ջրի մեջ, խմում է. «Վաշխառուն անկողնին մեջ տարածված կգալարվեր դեմքի սոսկալի պրկումներով։ Ոսկիներուն մեկ մասը բերնեն դուրս թափած էր, քանի մը հատ մորուքին վրա, իսկ մնացածը կոկորդին մեջ գացեր թխմվեր էին»[20]։

Ե. Օտյանը դիմել է նաև հիպերբոլային։ Հիպերբոլիկ բնույթ են կրում նրա «Հեղափոխության մակաբույծները» պատմվածաշարի կեղծ հերոսների պատմած սխրանքները, որոնք իրենց չափազանցությամբ դառնում են ծիծաղելի։ Այդպիսի օրինակներից է «Անվավեր հերոսներ» պատմվածքի հերոս

18 Նույն տեղում, էջ 431։
19 Նույն տեղում, էջ 526։
20 Նույն տեղում, էջ 527։

Միքոլի հորինած սխրանքների պատմությունը. «Վանի կողմերը երեք հոգիով անցած տարի կռվեր է չորս օր երկու հարյուր զինվորի դեմ. հետո ութը հարյուր քյուրտ եկեր պաշարեր են զիրենք, տեսեր է, որ ճար չի կա, անցեր է Պարսկաստան։ Հոն ութ հոգիե նոր խումբ մը կազմեր ու նորեն հարձակեր է Մուշի կողմերը։ Նորեն օրերով պաաերազմ։ Այս անգամ Երզնկայեն բանակ մը ղրկեր են իրեն դեմ, գիշեր մը բանակին մեջեն անցնելով հաջողեր է փախչիլ ու Ռուսաստան անցնիլ։ Հոնկե նորեն 12 հոգինոց խումբով մը եկեր է Ալաշկերտի վրա հարձակվելու։ Ռուս կառավարությունն իմացեր ու անմիջապես բանակ մը ղրկեր է ղանոնք արգիլելու համար. մյուս կողմեն՝ թյուրքերը, երկու հազարի չափ, եկեր են արշավանքը արգիլելու։ Այսպես խեղճը երկու սուլի մեջ մնացեր է ու ամիս մը անընդհատ կռվելե ետքը հաջողեր է ծպտյալ ինքզինք նետել Տրապիզոն ու հոնկե ֆրանսիական շոգենավով մը փախչիլ»[21]։

Այսպիսով, Ե. Օտյանն արևմտահայ տյն դեմոկրատ գրողներից է, որը իր երգիծաբանի մեծ տաղանդը, մարմնավորող գրիչը համարձակորեն ծառայեցրել է միայն մի նպատակի՝ անաչառ պայքարել հետադրական ուժերի և բացասական երեույթների դեմ, ժխանել նրանց ու դատապարտել մահվան։

КОМПОЗИЦИЯ И ЯЗЫК РАССКАЗОВ ЕРВАНДА ОТЯНА

НЕЛЛИ ТИТАНЯН

Резюме

Е. Отян, один из крупнейших западноармянских романистов, известен и как автор повестей и рассказов. Е. Отян явился достойным продолжателем традиций А. Пароняна. Интересно композиционное строение его рассказов. Излюбленные композиционные приемы Е. Отяна — портретная характеристика героев, характеристика главного героя другими действующими лицами произведения, описание душевного состояния героя, его размышления, переживания, описание предметов, окружающих героев.

Язык произведений Е. Отяна отличается особой выразительностью. Его повести и рассказы изобилуют меткими сравнениями, пословицами и поговорками, крылатыми словами и выражениями, эпитетами и гиперболами.

21 Նույն տեղում, էջ 418—419։